ՌՈՒԴԻԿ ԱՂԱԲԵԿՅԱՆ

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԸ ԵՎ ՇՈՒՇԻԻ ԹԵՄԱԿԱՆԸ

Հայ մանկավարժական մտքի պատմության տեսության և պրակտիկ գործունեության մեջ իր ուրույն տեղն ու դերն ունի Ղազարոս Աղայանը: Ինքը՝ Աղայանը մեր ժողովրդի վերջին հարյուրամյակի այն նշանավոր գործիչներից մեկն է, որի ոչ միայն գրական և մանկավարժական ժառանգությունը, այլև բազմամյա կյանքը (1840-1911) կրթական և ուսանելի շատ բան է պարունակում նրա հետնորդների համար: Նա ոտք դրեց և մանկավարժական ասպարեզ մտավ այն պահին, երբ հայ կրթական կյանքը, դպրոցը գտնվում էր խղճուկ վիճակում՝ ուսումն աղքատիկ, մեթոդները դոգմատիկ, ոգին սխոլաստիկ: Հայտնի է, որ բնութագրվող ժամանակաշրջանում հայկական դպրոցներում չկային հաստատուն ծրագրեր, չկային աշխարհաբար դասագրքեր և, ամենագլխավորը, քիչ թե շատ որակյալ մանկավարժական կադրեր: Ինչպես Աղայանն է մատնանշում. «Գիտուն, հմուտ ուսուցիչները եզակի էին, իսկ ճնշող մեծամասնությունը սահմանափակ մտապաշարի և ծխական մտայնության տեր»: Հենց այդ տարիներին էլ հայ ուսուցիչների ուսուցիչը նվիրվեց մանկավարժությանը, ամենայն հափշտակությամբ կարդաց մանկավարժական գիտությանն ու դպրոցի պրակտիկ փորձին նվիրված բազում աշխատանքներ, հատկապես տարվեց եվրոպական դասական մանկավարժների՝ Պեստալոցցու, Ֆրեոբելի, Դիստերվեգի և այլ մեծանուն մանկավարժների աշխատություններով, որոնք ուղեցույց հանդիսացան նրա ապագա մանկավարժական հարուստ գործունեության համար:

19-րդ դարի հայ մանկավարժության նոր սերնդի շարքում պատվավոր տեղ գրավելով՝ Ղ. Աղայանը նոր ազգային դպրոցում հայտնվեց իբրև մի նորարար, դաստիարակ և տեսուչ: Այդ տարիներին նա Շուշիի Թեմական դպրոցում աշխատելով որպես ուսուցիչ, իսկ հետո (1880թ.) տեսուչ, իր հետ բերեց թարմ հոսանք: Աղայանը թեմականում արգասավոր մանկավարժական գործունեության տարիներին հետևողականորեն պայքարում էր նոր դպրոցում տիրող կամայականությունների դեմ: Նա թեմականի աշակերտների հոգատար դաստիարակն էր: Նրա ամենասովորական զրույցներն ու դասերը ընթանում էին հաճելի ու արդյունավետ: Զուր չէ, որ նրա բազմաբեղուն մանկավարժական գործունեության, ազգային դպրոցի և ուսուցչությանը մատուցած ծառայու-

թյունների համար նրան անվանում էին «հայ ուսուցիչների ուսուցիչ»: Թեմականում աշխատելու տարիներին Աղայանը ուսուցիչների շուրջն ու հոգին էր, կենտրոնական դիրք էր գրավում, բոլորին համախմբում էր իր շուրջը, մանավանդ նորեկ ուսուցիչներին և օգնում էր նրանց ինչպես անձնական խորհուրդներով, այնպես էլ մանկավարժական-մեթոդական ցուցումներով, զեկուցումներով, փորձնական և պրակտիկ դասեր տալով: Հենց այդ գործնական աշխատանքի ընթացքում էլ նա կառուցեց ու զարգացրեց իր մանկավարժական և կրթադաստիարակչական համակարգը:

Որպես նորարար մանկավարժ՝ Աղայանը Շուշիի Թեմական դպրոցում աչքի ընկավ իր պրակտիկ փորձով, անձնական օրինակով ու հեղինակությամբ՝ նաև աշակերտների շրջապատում, ինչպես և՝ Շուշիում ծավալված հասարակական–քաղաքական, լուսավորական բազմաբնույթ գործունեության ոլորտում:

Հայկական դպրոցներում (Ալեքսանդրապոլի, Երևանի թեմական, ծխական և այլ հայաշատ վայրերում) մանկավարժական ստեղծագործական տարիներին ձեռք բերած հարուստ փորձի հիման վրա, ականավոր մանկավարժը Շուշիի թեմականում, օրիորդաց, ծխական դպրոցներում լուրջ ուշադրություն դարձրեց ուսուցման կազմակերպման՝ դեռևս հնացած ձևերն ու եղանակները, դասավանդման դրվածքը վերանայելու վրա, և այդ համակարգում նորարարություն մտցրեց Շուշիի Թեմական դպրոցում ուսուցման որակի բարձրացման, թերությունների վերացման միտումով: Աղայանը խստորեն քննադատում էր տեսուչներին, հոգաբարձուներին՝ կազմակերպական աշխատանքներում տեղ գտած թերությունների համար, հատկապես նրանում, որ պատշաճ մակարդակով չէին գնահատում ուսուցիչների գործունեությունը:

Աղայանն իր պրակտիկ փորձով, մանկավարժական վարպետությամբ ու ստեղծագործական կարողություններով կարողացավ հարստացնել թեմականների միտքը և իր բացառիկ ընդունակությունները փոխանցել սկսնակ ուսուցիչներին:

Ղազարոս Աղայանը՝ ունենալով մանկավարժի բացառիկ ընդունակություններ, կարողություններ և հմտություններ, դրան միացնելով ուսուցիչ-դաստիարակի տաղանդն ու փորձառությունը, համառ ինքնաշխատասիրությունը և ձեռք բերած տեսական լուրջ գիտելիքները, կարճ ժամանակում դարձավ Թեմական դպրոցի աշակերտների և ուսուցիչների ուսուցիչը: Այդ են վկայում նրա մասին տարբեր հեղինակների ուսումնասիրված աշխատություններում բերված փաստերը, տարբեր ժամանակներում տարբեր վայրերից գրված նամակները, որոնք գրել էին նաև իր աշակերտները՝ իրենց հարգանքի, խոր

ակնածանքի հետ անկեղծ կարոտ և ափսոսանք հայտնելով նրա բացակայության առթիվ:

Բազմավաստակ պատմաբան Լեոն վկայում է, որ Շուշիի Թեմական դպրոցի սաներից շատերը հետագայում իրենց հուշերում սիրով են նշում, որ Ղազարոս Աղայանի ամենասովորական դասերն անգամ անցնում էին թեթև ու հաճելի, հետաքրքիր, տպավորիչ և արդյունավետ: Շնորհիվ իր այդ կարողությունների նա շատ շուտ հասավ մանկավարժական վարպետության բարձունքներին և իրավամբ դասվեց հայ մանկավարժների շարքին:

Ղ. Աղայանը Շուշիի Թեմական դպրոցի մանկավարժական խորհրդի նիստերում ունեցած իր ելույթներում և հատկապես բազմաբնույթ աշխատություններում միշտ մեծ տեղ է հատկացրել և բարձր գնահատել «ուսուցչի կենդանի օրինակի ներգործուն ուժը, որին չի կարող փոխարինել ոչ մի բան» [2]: Ըստ այդմ էլ Աղայանը ուսուցչին ներկայացրել է մի շարք պահանջներ, որոնք այսօր էլ անչափ կենսունակ են: Այսպես, օրինակ, «Ուսուցիչը վեհ պետք է լինի աշակերտաց աչքումը և պիտի նոցա ծանոթ շատ մարդկանցից,՝ նա պիտի լինի կենդանի կատարելատիպ աշակերտաց համար յուր առաքինությամբ, յուր ջանասիրությանբը, կարգապահությամբը» [2]: Ուսուցիչը պետք է սիրի երեխաներին, իր հոգով ու սրտով պետք է նվիրված լինի երեխաների կրթության և դաստիարակության սուրբ գործին, իսկ «Ոմն չի ոգևորում դաստիարակության գործը,- գրում է Աղայանը,- ով որ այդ պաշտոնը վարձկանի պես է կատարում, լավ կլիներ, եթե այդպիսին օր առաջ չքվեր սուրբ վայրից» [5]:

Ճիշտ է նկատում Աղայանը, որ հեղինակավոր ուսուցիչը երեխայի համար դառնում է իդեալ, որին նա երբեք չի մոռանում. «Ով չգիտե, որ աշակերտը ատելով վարժապետին ատում է նաև ուսմունքը, որքան այդ օգտակար լիներ, և ընդհակառակն, պատվելով վարժապետին, սիրում է նորա դասերը... Ո՞վ. մեզնից սրբությամբ չի հիշում վարժապետի անունը, որ թե՛ բանիվ և թե՛ գործով աշխատում էր աշակերտաց բարոյականությունը» [6]:

Ղ. Աղայանը ուսուցչի վեհ ու վսեմ արժանիքների մասին հաղորդակցվելով թեմական դպրոցի ուսուցիչների հետ, մատնանշում է, որ կրթադաստիարակչական ամբողջ գործընթացի շարժիչն ու ղեկավարը ուսուցիչն է, հենց դրա համար էլ նրանից պահանջվում է ստեղծագործաբար աշխատել իր մասնագիտական որակի բարձրացման վրա, լինի իմաստության օրինակ, գիտելիքների հզոր աղբյուր, բարոյական նորմեր ներմուծողող կերպար՝ կապված մանկավարժական և հասարակական աշխատանքներին: Ուսուցիչն իր աշակերտների համար պետք է լինի կատարելատիպ, ուրեմն, հեղինակավոր և ակնածելի: Այս ընդհանրացնող բնութագրական հատկանիշները Աղայանը ներկայացնում է

Շուշիի թեմականում աշխատելու տարիներին գրած «Մի ուսուցչի հոբելյան» աշխատության մեջ: Աղայանը միաժամանակ մատնանշում է. «պիտի տոնեին Գաբրիելի ուսուցչության երեսունհինգ ամյակը, այդ օրը թեմականում մի տարօրինակ ուսուցչական խումբ (թուրքական) թալանի էր ենթարկում Շուշիի հայոց Թեմական դպրոցը և ամեն ինչ ոտնատակ տալով անցնում գնում: Մենք դրանից եզրակացնում ենք, որ այս հանգամանքը ևս մի ապացույց է՝ թե որքան ցածր, որքան ստոր էր հայկական քաղաքում ապրող թուրք բարբարոսների բարոյական աստիճանը: Թուրքերի կողմից կատարված այդ ստորությունը, երբ ուսումնասիրում ես, թե ինչպիսի հարված էր, որ հասցրին թեմականներին: Այս երևույթը դաս դարձավ թեմականի ուսուցիչներին և աշակերտներին: Նրանք ջանք ու եռանդ չխնայեցին մի նոր ազնիվ սերունդ պատրաստելու համար

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Աղայանը՝ դասավանդելով Շուշիի Թեմական դպրոցում, կարողացել է մոտիկից ուսումնասիրել ոչ միայն թեմականների, այլև Շուշիում գործող մի շարք դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքները և մոտիկից ցույց տալու տեսական՝ և մեթոդական օգնություն մանկավարժական կոլեկտիվներին:

Գրականություն

1. Ա.Վ.Շավարշյան-Հայ մանկավարժներ, գիրք Ա, Ե., Հայպետհրատ, 1958թ.:
2. Ղ. Աղայան- Երկերի ժողովածու, հ. 1, էջ 5-31, 341-345:
3. Ա. Շավարշյան, Վ Աստվածատրյան, Ա. Ասատրյան-Ղ. Աղայանը հայ մանկավարժ, Ե., 1941թ., թջ 1-5, 197-198:
4. Ե.Հ. Ավետիսյան, Մ.Ս. Մելքումյան-Ղ. Աղայանի մանկավարժական ժառանգությունը և նրա այժմեականությունը: Ե., «Լույս», 1991թ., էջ 81-85:
5. Ղ. Աղայան - Երկերի ժողովածու, հ-4, էջ 67, 93
6. Ղ.Աղայանը մանկավարժ, էջ 300:
7. Գ.Հ. Հարությունյան-Արցախյան դպրոցի և մանկավարժության նշանավոր գործիչները, «Ազատ Արցախ» հրատ. ք. Ստեփանակերտ, 2001, էջ 5-7: